ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

«27» 10 2023 թ. Երևան № 57-Լ

ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի 01-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 7-րդ կետերով և 34-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ

1. Սահմանել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողական քննություն իրականացնելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 2022 թվականի հունվարի 27-ի 01-Լ հրամանով հաստատված՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ ծառայողական քննություն իրականացնելու կարգը:
3. Սույն հրամանը ծանոթացնել Կոմիտեի բոլոր ծառայողներին:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական՝ **Սասուն Խաչատրյան**

Հավելված

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի

25.10.2023 թ-ի թիվ 57-Լ հրամանի

Կ Ա Ր Գ
ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի (այսուհետ նաև՝ Կոմիտե) ծառայողի նկատմամբ ծառայողական քննություն հարուցելու և այն իրականացնելու կարգը:

2. Ծառայողական քննությունն իրականացվում է սույն Կարգին և «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքին (այսուհետ նաև՝ Օրենք) համապատասխան: Կոմիտեի ծառայողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը սահմանվում են «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքով:

3. Ծառայողական քննությունն օրենքով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև սույն կարգով սահմանված դեպքերում և ընթացակարգով Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պարտականությունների կատարմանն ու նրա գործունեությանն առնչվող հարցերի քննությունն է:

4. Ծառայողական քննության փուլերն են նախնական ուսումնասիրությունը և կարգապահական վարույթը:

5. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ ծառայողական քննությունն իրականացվում է ծառայողական կարգապահության ամրապնդման, Կոմիտեի ծառայողի կողմից կատարված կարգապահական խախտման ժամանակին բացահայտման և կարգապահական պատասխանատվության ենթարկման, կարգապահական խախտումների կանխարգելման, դրանց պատճառների ու նպաստող պայմանների վերացման, կարգապահական խախտման հանգամանքների ժամանակին, լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ պարզաբանման, անհիմն կերպով կարգապահական պատասխանատվության ենթարկված Կոմիտեի ծառայողի հեղինակության վերականգնման նպատակով:

6. Ծառայողական քննությունն իրականացվում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի վարչական շենքում, իսկ Կարգով սահմանված գործողությունները կարող են կատարվել նաև այլ վայրերում:

7. Կոմիտեի ծառայողի կարգապահական խախտման մեջ մեղավորությունն ապացուցելու, ինչպես նաև ի պաշտպանություն վերջինիս բերված փաստարկների հերքման պարտականությունը նախնական ուսումնասիրության և կարգապահական վարույթի փուլերում կրում է նախնական ուսումնասիրություն իրականացնող անձը:

8. Ծառայողական քննությունն իրականացվում է ծառայողական քննություն նշանակելու պատճառ կամ առիթ հանդիսացող փաստաթղթերում նշված հանգամանքների ստուգմամբ և պարզաբանմամբ:

9. Ծառայողական քննության ընթացքում մեկ այլ կարգապահական խախտման հատկանիշներ հայտնաբերելու դեպքում, նախնական ուսումնասիրության փուլում՝ ծառայողական քննություն իրականացնող անձը զեկուցագրով դիմում է Կոմիտեի նախագահին՝ կարգապահական խախտման փաստի առթիվ ծառայողական քննություն հարուցելու նպատակով կարգապահական հանձնաժողովին միջնորդություն ներկայացնելու հարցը քննարկելու համար, իսկ կարգապահական վարույթի փուլում՝ Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննարկում է ծառայողական նոր քննություն հարուցելու հարցը:

10. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը, ում նկատմամբ նշանակված է ծառայողական քննություն, մինչև ծառայողական քննության ավարտը չի կարող տեղափոխվել կամ նշանակվել նոր պաշտոնի:

11. Ծառայողական քննության ժամանակահատվածում հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի լիազորությունները կարող են ժամանակավորապես դադարեցվել, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով՝ նա կխոչընդոտի ծառայողական քննության իրականացմանը: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի լիազորությունները ժամանակավորապես դադարեցվում են նախնական ուսումնասիրության փուլում՝ ուսումնասիրությունն իրականացնող անձի պատճառաբանված զեկուցագրի, իսկ կարգապահական վարույթի փուլում՝ Հանձնաժողովի միջնորդության հիման վրա՝ Կոմիտեի նախագահի հրամանով:

12. Լիազորությունները ժամանակավորապես դադարեցված Կոմիտեի ծառայողի վարձատրությունը պահպանվում է: Տվյալ ժամանակահատվածում Կոմիտեի ծառայողը Կոմիտեի համապատասխան ստորաբաժանումներին է հանձնում իր վկայականը և զենքը, որի մասին կազմվում է արձանագրություն: Արձանագրության մեկ օրինակը հանձնվում է Կոմիտեի ծառայողին:

13. Պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվող ծառայողական քննությունն իրականացվում է սույն կարգով նախատեսված կանոններով՝ պահպանելով պետական գաղտնիքի մասին օրենսդրության պահանջները:

2. ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒՑԵԼԸ

14. Կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

1) Կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները խախտելը.

2) իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը.

3) ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներքին կարգապահական կանոնները պարբերաբար խախտելը.

4) օրենքով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության կամ «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածով սահմանված շահերի բախմանն առնչվող պահանջները չպահպանելը.

5) առաքինության ստուգման բացասական արդյունքները:

15. Կարգապահական խախտման փաստի առթիվ Կոմիտեի ծառայողի նկատմամբ ծառայողական քննություն հարուցվում է Հանձնաժողովի որոշմամբ՝

- հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի միջնորդության հիման վրա,

- հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի միջնորդության հիման վրա,

-կարգապահական հանձնաժողովի որևէ անդամի միջնորդության հիման վրա,

- դատախազի՝ օրենքով սահմանված կարգով ներկայացված ծառայողական քննություն իրականացնելու վերաբերյալ միջնորդության հիման վրա,

- ֆիզիկական կամ իրավաբանական անձի հաղորդումների հիման վրա,

- պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումների հիման վրա,

- զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա:

16. Այն դեպքերում, երբ ֆիզիկական կամ իրավաբանական անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից ներկայացվել է բանավոր հաղորդում, ապա դրանք պետք է ձևակերպվեն գրավոր կերպով՝ հետագա ընթացքը լուծելու համար:

17. Կարգապահական խախտման հատկանիշների առերևույթ առկայության հարցը պարզելու նպատակով Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված միջնորդությունը, հաղորդումը կամ հրապարակումը ստանալուց հետո Հանձնաժողովը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) ծառայողական քննություն հարուցելու մասին,

2) ծառայողական քննություն հարուցելը մերժելու մասին:

18. Ծառայողական քննություն հարուցելու մասին որոշման կայացման դեպքում Հանձնաժողովը որոշումը և ծառայողական քննության նյութերը ուղարկում է

Կոմիտեի նախագահին՝ Կոմիտեի ներքին անվտանգության վարչության (այսուհետ՝ նաև ՆԱՎ) միջոցով նախնական ուսումնասիրության կատարումը կազմակերպելու համար:

19. Կոմիտեի նախագահը ծառայողական քննություն հարուցելու մասին որոշումը և նյութերը ստանալուց հետո, Կոմիտեի ներքին անվտանգության վարչության պետին հանձնարարում է կազմակերպել նախնական ուսումնասիրության իրականացումը: Իսկ այն դեպքում, երբ կարգապահական խախտման փաստի առթիվ հաղորդումը (միջնորդությունը կամ հրապարակումը) վերաբերվում է Կոմիտեի ՆԱՎ-ի պետին, ապա Կոմիտեի նախագահը ծառայողական քննություն հարուցելու մասին որոշումը և նյութերը ստանալուց հետո, նախնական ուսումնասիրության կատարման կազմակերպումը հանձնարարում է Կոմիտեի այլ ստորաբաժանման ղեկավարին, որն էլ իրականացնում է սույն կարգով նախատեսված լիազորությունները:

20. ՆԱՎ-ի պետը ծառայողական քննություն հարուցելու մասին որոշումը և ծառայողական քննության նյութերը ստանալուց հետո՝ նախնական ուսումնասիրության կատարումը հանձնարարում է նույն վարչության ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի կամ անձանց:

21. Այն դեպքերում, երբ Հանձնաժողովը հանգում է եզրակացության, որ առերևույթ բացակայում են կարգապահական խախտման հատկանիշները, ապա կայացնում է որոշում՝ ծառայողական քննություն հարուցելը մերժելու մասին և այդ մասին պատշաճ ծանուցում է հաղորդում կամ միջնորդություն ներկայացրած անձին:

3. ՆԱԽՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

22. Համապատասխան հանձնարարություն ստացած անձի կողմից իրականացվում է նախնական ուսումնասիրությունը:

23. Նախնական ուսումնասիրության ընթացքում պարզաբանման ենթակա հանգամանքներն են՝

1) կարգապահական խախտման դեպքը և կատարման հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն),

2) կարգապահական խախտման կազմի տարրերը,

3) Կոմիտեի ծառայողի մեղավորությունը կարգապահական խախտում կատարելու մեջ,

4) կարգապահական խախտումը ծնող պատճառները և դրանց նպաստող պայմանները:

24. Նախնական ուսումնասիրությունն իրականացվում է հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ավելի, քան ծառայողական քննություն հարուցելուց սկսած 20 օրվա ընթացքում:

25. Նախնական ուսումնասիրության հիմքում չեն կարող դրվել օրենքի և սույն Կարգի պահանջների խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալներ:

26. Նախնական ուսումնասիրություն իրականացնող անձը առերևույթ կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող կոմիտեի ծառայողին, նախնական ուսումնասիրությանը մասնակցող անձին բացատրում է նրանց իրավունքները և պարտականությունները, որոնց կապակցությամբ կազմված արձանագրությունների տակ նրանք նշում են կատարում և ստորագրում:

27. Նախնական ուսումնասիրության ընթացքում առերևույթ հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում նյութերը նախնական ուսումնասիրություն կատարող ծառայողի համապատասխան զեկուցագրով ներկայացվում են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին:

28. Նախնական ուսումնասիրության ընթացքը և արդյունքներն ամրագրվում են արձանագրությամբ, որը կազմում է այն իրականացնող անձը: Արձանագրությանը կարող են կցվել այլ փաստաթղթեր կամ նյութեր:

29. Նախնական ուսումնասիրություն իրականացնող անձը լիազորված է՝

1) առաջարկել բացատրություններ տալ այն ֆիզիկական անձանց, որոնք կարող են կարգապահական խախտման հանգամանքների առնչությամբ անհրաժեշտ տեղեկատվություն հայտնել,

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ մարմիններից և կազմակերպություններից սահմանված կարգով պահանջել փաստաթղթեր, նյութեր և տվյալներ, որոնք կարող են տեղեկություններ պարունակել իրավախախտման և դրան առնչվող անձանց մասին,

3) ուսումնասիրել առերևույթ իրավախախտման փաստին առնչվող քրեական, քաղաքացիական, կարգապահական կամ վարչական վարույթի նյութեր և Կոմիտեի տնօրինության տակ գտնվող այլ փաստաթղթեր, անհրաժեշտության դեպքում դրանց կրկնօրինակները կցել նախնական ուսումնասիրության նյութերին,

4) վերցնել բացատրություններ (լրացուցիչ բացատրություններ), այդ թվում՝ հեռավար կարգով, առերևույթ կարգապահական խախտման մեջ մեղադրվող Կոմիտեի ծառայողներից, Կոմիտեի այն ծառայողներից և Կոմիտեի աջակցող ստորաբաժանումների աշխատակիցներից, որոնք կարող են կարգապահական խախտման հանգամանքների առնչությամբ անհրաժեշտ տեղեկատվություն հայտնել,

5) կատարել զննություն,

6) ստանալու մասնագետի կարծիք,

7) իր իրավասության սահմաններում լուծել առերևույթ կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող Կոմիտեի ծառայողի միջնորդությունները,

8) պարզաբանել առերևույթ կարգապահական խախտման մեջ մեղադրվող Կոմիտեի ծառայողի, մասնագետի, այլ անձի իրավունքներն ու պարտականությունները:

9) միջնորդություն ներկայացնել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին՝ «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 20-րդ մասով նախատեսված կարգով Կոմիտեի ծառայողի լիազորությունները ժամանակավորապես դադարեցնելու վերաբերյալ,

10) նախնական ուսումնասիրության ավարտից հետո, բայց մինչև եզրակացության հաստատումը, առերևույթ կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող Կոմիտեի ծառայողին ծանոթացնել նախնական ուսումնասիրության նյութերին, ներառյալ՝ եզրակացությանը,

11) նախնական ուսումնասիրություն իրականացնող անձը յուրաքանչյուր դեպքում Կոմիտեի նախագահի կողմից կարող է օժտվել օրենսդրության պահանջներին չհակասող այլ լիազորություններով:

30. Նախնական ուսումնասիրություն իրականացնող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը ծառայողական քննության ընթացքում պարտավոր է՝

1) իրականացնել լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ նախնական ուսումնասիրություն և դրա արդյունքում ներկայացնել հիմնավորված եզրակացություն,

2) հանդես գալ բացման խոսքով և պատասխանել Հանձնաժողովի նախագահի և անդամների հարցերին:

31. Նախնական ուսումնասիրություն իրականացնող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի անմիջական ղեկավարը լիազորված է՝

1) նախնական ուսումնասիրությունը հանձնարարել ներքին անվտանգության վարչության ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին, տալ պարտադիր կատարման ենթակա ցուցումներ առանձին գործողություններ կատարելու վերաբերյալ,

2) նախնական ուսումնասիրության ընթացքում դրա իրականացումը Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի համաձայնությամբ գրավոր հանձնարարել Կոմիտեի ներքին անվտանգության վարչության ինքնավար պաշտոն զբաղեցնող այլ անձի,

3) մասնակցել նախնական ուսումնասիրության ընթացքում առանձին գործողությունների կատարմանը, անձամբ կատարել նախնական ուսումնասիրություն,

4) գրավոր հաստատել նախնական ուսումնասիրության արդյունքներով կազմված եզրակացությունը, իսկ դրա հետ համաձայն չլինելու դեպքում այն հետ ուղարկել՝ սույն կարգի 41-րդ կետի «բ» և «գ» ենթակետերով նշված գործողությունները կատարելու նպատակով:

32. Առերևույթ կարգապահական խախտման մեջ մեղադրվող Կոմիտեի ծառայողն իրավունք ունի՝

1) ծառայողական քննություն հարուցելու մասին որոշման կայացման պահից ծանոթանալու իր իրավունքներին և պարտականություններին,

2) իմանալու, թե ինչ խախտման առիթով է իրականացվում ծառայողական քննությունը, և բացատրություն տալ իր նկատմամբ հարուցված ծառայողական քննության առնչությամբ,

3) բացարկ ներկայացնելու, եթե հիմքեր կան ենթադրելու, որ նախնական ուսումնասիրություն կամ կարգապահական վարույթն իրականացնող անձն ուղղակիորեն կամ անուղղակիորեն շահագրգռված է ծառայողական քննության ելքով:

4) միջնորդություններ ներկայացնելու առանձին գործողություններ կատարելու, ինչպես նաև նախնական ուսումնասիրության նյութերին իր դիմումը հիմնավորող փաստական տվյալներ կցելու և դրանց ընթացք տալու վերաբերյալ,

5) ծանոթանալու իր մասնակցությամբ կատարված գործողությունների ընթացքի, բովանդակության, արդյունքների վերաբերյալ կազմված տեղեկանքներին կամ արձանագրություններին և դրանց կապակցությամբ ներկայացնելու առաջարկություններ, միջնորդություններ ու դիտողություններ,

6) նախնական ուսումնասիրության ավարտից հետո, բայց մինչև եզրակացության հաստատումը, ծանոթանալու նախնական ուսումնասիրության նյութերին (բացառությամբ պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տվյալների), այդ թվում նաև՝ կարգապահական վարույթի արդյունքներով կազմված եզրակացությանը:

7) ստանալու իրավաբանական օգնություն, այդ թվում՝ հանդես գալու ներկայացուցչի (ներառյալ՝ փաստաբանական ծառայություններ մատուցողի) միջոցով:

33. Առերևույթ կարգապահական խախտման մեջ մեղադրվող Կոմիտեի ծառայողը պարտավոր է.

1) նախնական ուսումնասիրության ընթացքում այն իրականացնող լիազոր մարմնի պահանջով ներկայանալու նախնական ուսումնասիրության իրականացման վայր, մասնակցելու անհրաժեշտ գործողությունների և ստորագրությամբ հաստատելու դրանց կապակցությամբ կազմված արձանագրությունների (տեղեկանքների) ճշտությունը, իսկ ստորագրելուց հրաժարվելու դեպքում ներկայացնելու գրավոր պատճառաբանություն,

2) նախնական ուսումնասիրություն իրականացնող անձի պահանջով ներկայացնել իր մոտ եղած՝ ծառայողական քննության համար անհրաժեշտ առարկաները և փաստաթղթերը:

34. Ծառայողական քննությանն առնչվող անձ է համարվում նա, ում կարող է հայտնի լինել ծառայողական քննությանը հետաքրքրող հարցերի ու հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ, որոնց համապատասխան նա կամավորության հիմունքներով տալիս է գրավոր կամ բանավոր բացատրություններ (ըստ պահանջի):

35. Ծառայողական քննությանն առնչվող անձն իրավունք ունի՝

1) ծառայողական քննությանը մասնակցելու պահից ստանալու իր իրավունքների մասին պարզաբանում,

2) տեղեկանալու, թե ինչ նպատակով է կանչել ծառայողական քննություն իրականացնող անձը,

3) բացատրություններ տալու և անձամբ շարադրելու դրանք,

4) ծանոթանալու իր մասնակցությամբ կատարած գործողությունների ընթացքի, բովանդակության, արդյունքների վերաբերյալ կազմված տեղեկանքներին կամ արձանագրություններին և դրանց կապակցությամբ ներկայացնելու դիտողություններ և առաջարկություններ:

36. Բացարկի հարցը նախնական ուսումնասիրության փուլում լուծում է Կոմիտեի նախագահը, իսկ կարգապահական վարույթի ընթացքում՝ Հանձնաժողովը: Հանձնաժողովի անդամին բացարկ ներկայացնելու դեպքում վերջինս չի մասնակցում քվեարկությանը:

37. Բանավոր միջնորդությունն ամրագրվում է արձանագրության մեջ, իսկ գրավոր միջնորդությունը կցվում է վարույթի նյութերին: Միջնորդությունը պետք է քննության առնվի և լուծվի անհապաղ, բայց ոչ ուշ, քան 2 օրվա ընթացքում:

38. Առերևույթ կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող Կոմիտեի ծառայողը, ինչպես նաև ծառայողական քննությանն առնչվող անձը ծառայողական քննություն իրականացնող անձի գործողությունները կարող են բողոքարկել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին:

39. Նախնական ուսումնասիրության արդյունքներով եզրակացությունը կազմելուց հետո մինչև դրա հաստատումը առերևույթ կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող կոմիտեի ծառայողը տեղեկացվում է այդ մասին, նախնական ուսումնասիրություն կատարած անձի ներկայությամբ ծանոթանում է եզրակացությանը, իրեն վերաբերող նյութերին:

40. Նախնական ուսումնասիրության արդյունքում կազմվում է եզրակացություն, որը բաղկացած է ներածական, նկարագրական- պատճառաբանական և եզրափակիչ հետևյալ մասերից.

1) ներածական մասում նշվում են տվյալներ եզրակացությունը կազմելու վայրի, նախնական ուսումնասիրություն սկսելու առիթի, հիմքի, ժամկետի և նախնական ուսումնասիրություն կատարած անձի մասին,

2) նկարագրական-պատճառաբանական մասում շարադրվում են՝

ա. նախնական ուսումնասիրության ընթացքում պարզված հանգամանքների և դրանց հիմնավորումների վերաբերյալ տվյալները,

բ. կարգապահական խախտման առկայությունը կամ բացակայությունը, դրանում Կոմիտեի ծառայողի մեղավորությունը կամ անմեղությունը հաստատող փաստական տվյալները,

գ. Կոմիտեի ծառայողին բնութագրող այլ հանգամանքներ,

դ. Կոմիտեի ծառայողի վերջին մեկ տարում ստացած գործող կարգապահական տույժերի վերաբերյալ տվյալները,

ե. կարգապահական վարույթի կասեցման անհրաժեշտությունը հիմնավորող փաստական տվյալները,

3) եզրափակիչ մասում շարադրվում են ծառայողական քննության արդյունքների վերաբերյալ արված հետևությունները, նախնական ուսումնասիրություն իրականացրած անձի անվան, ազգանվան, զբաղեցրած պաշտոնի, դասային աստիճանի, ինչպես նաև եզրակացությունը կազմելու տարվա, ամսվա և ամսաթվի մասին տեղեկություններ: Կարգապահական խախտման առկայության դեպքում նշվում է նաև առերևույթ կարգապահական խախտման իրավական գնահատականը:

41. Նախնական ուսումնասիրության արդյունքում կազմված եզրակացությունը՝ ներկայացվում է Կոմիտեի ներքին անվտանգության վարչության պետին, որը՝

ա) համաձայնելով նախնական ուսումնասիրության արդյունքների և եզրակացության հետ՝ ստորագրությամբ հաստատում է եզրակացությունը,

բ) եզրակացության մեջ եղած ձևակերպումներից և հետևություններից առանձին կետեր հանելու կամ փոփոխելու վերաբերյալ գրավոր հանձնարարություն է տալիս նախնական ուսումնասիրություն իրականացնող անձին,

գ) նախնական ուսումնասիրություն իրականացնող անձին լրացուցիչ գործողություններ կատարելու և առանձին հանգամանքներ պարզելու համար տալիս է հանձնարարականներ՝ նշելով կատարման ժամկետը:

42. Սույն կարգի 41-րդ կետի «բ» և «գ» ենթակետերով նախատեսված դեպքերում կազմվում է նոր եզրակացություն, իսկ նախկին եզրակացությունը կցվում է նախնական ուսումնասիրության նյութերին:

43. Ներքին անվտանգության վարչության պետը իրավունք ունի նախնական ուսումնասիրության ցանկացած փուլում, ինչպես նաև եզրակացությունը չհաստատելու դեպքում, նախնական ուսումնասիրության կատարումը վերահանձնարարել ՆԱՎ-ի մեկ այլ ծառայողի:

44. Նախնական ուսումնասիրության արդյունքների, ինչպես նաև նախնական ուսումնասիրության կատարումն այլ ծառայողի վերահանձնարարելու մասին եռօրյա ժամկետում տեղեկացվում է առերևույթ կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող ծառայողը:

4. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

45. Նախնական ուսումնասիրության արդյունքում կազմված և հաստատված եզրակացությունը (այսուհետ՝ Եզրակացություն) ներկայացվում է Կոմիտեի նախագահին, որն էլ այն ուղարկում է Հանձնաժողովին՝ կարգապահական վարույթ հարուցելու հարցը լուծելու համար:

46. Կարգապահական վարույթը բաղկացած է Եզրակացության քննարկման, լսումների և որոշման կայացման փուլերից:

47. Կարգապահական վարույթ կարող է հարուցվել Օրենքով սահմանված հիմքերն ի հայտ գալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան կարգապահական խախտում կատարելու օրվանից 12 ամիս հետո:

48. Կարգապահական վարույթի տևողությունը չի կարող գերազանցել մեկ ամիսը, բացառությամբ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի բացակայության դեպքերի: Այդ դեպքերում կարգապահական վարույթի տևողությունը կարող է երկարաձգվել հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի բացակայության ժամանակահատվածով:

49. Եզրակացությունը ստանալուց հետո Հանձնաժողովի նախագահը հրավիրում է նիստ: Բացում է Հանձնաժողովի նիստը՝ հայտարարելով, թե ինչ հարց կամ հարցեր են ենթակա քննարկման, ինչպես նաև սահմանում է նիստի օրակարգում ընդգրկված հարցերի քննարկման հերթականությունը:

50. Եզրակացության քննարկման արդյունքում հանձնաժողովը որոշում է կայացնում կարգապահական վարույթ հարուցելու կամ չհարուցելու մասին:

51. Կարգապահական վարույթ չի հարուցվում, իսկ հարուցված կարգապահական վարույթը դադարեցվում է, եթե՝

1) առերևույթ կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող Կոմիտեի ծառայողը մահացել է կամ դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած է ճանաչվել, և կարգապահական պատասխանատվության ենթակա Կոմիտեի այլ ծառայողներ չկան.

2) առերևույթ կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող Կոմիտեի ծառայողը պաշտոնից ազատվել է Օրենքի 24-րդ հոդվածով սահմանված կարգով.

3) լրացել է սույն կարգի 48-րդ կետով նախատեսված՝ կարգապահական վարույթի տևողության ժամկետը.

4) լրացել է կարգապահական խախտման վաղեմության ժամկետը

5) նույն արարքի համար նույն ծառայողի նկատմամբ արդեն իսկ առկա է հարուցված կարգապահական վարույթ,

6) նույն արարքի համար նույն ծառայողի նկատմամբ առկա է կարգապահական տույժ նշանակելու որոշում:

52. Եթե մինչև կարգապահական վարույթ հարուցելը կամ կարգապահական վարույթ հարուցելուց հետո պարզվել է, որ առկա է հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի մասնակցությամբ կամ նրա կատարած ենթադրյալ հանցագործության դեպք, ապա կարգապահական վարույթի հարուցումը հետաձգվում է, իսկ հարուցված կարգապահական վարույթը կասեցվում է մինչև համապատասխան քրեական վարույթի ավարտը:

53. Կարգապահական վարույթի ընթացքում առերևույթ հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում նյութերը Հանձնաժողովի նախագահի համապատասխան հաղորդմամբ ներկայացվում են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին:

54. Կարգապահական վարույթը կասեցվում և վերսկսվում է Հանձնաժողովի որոշմամբ:

55. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելու դեպքում Հանձնաժողովը քննարկում է լսումներ անցկացնելու հարցը:

56. Մինչև կարգապահական խախտման վերաբերյալ փաստական տվյալների հետազոտումը սկսելը Կոմիտեի ՆԱՎ-ի նախնական ուսումնասիրություն իրականացնող ծառայողը (այսուհետ՝ Զեկուցող), իսկ նրա բացակայության դեպքում ՆԱՎ-ի պետը կամ նրա հանձնարարությամբ տվյալ ստորաբաժանման մեկ այլ ծառայող, ներկայացնում է Եզրակացությունը, Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի այն կետը, որի առերևույթ խախտման մեջ մեղադրվում է Կոմիտեի ծառայողը, ինչպես նաև կարգապահական խախտում կատարելու փաստական հիմքը: Հանձնաժողովի նախագահը կամ անդամները կամ լսումների մասնակիցները իրավունք ունեն հարցեր տալու Զեկուցողին:

57. Առերևույթ կարգապահական խախտման մեջ մեղադրվող Կոմիտեի ծառայողն իրավունք ունի ներկայացնել իրեն վերագրվող կարգապահական խախտման վերաբերյալ դիրքորոշումը, տալ բացատրություններ, ներկայացնել նյութեր: Հանձնաժողովի նախագահը, անդամները և լսումների մասնակիցները իրավասու են Կոմիտեի ծառայողի դիրքորոշումը ճշտող հարցեր տալ:

58. Հանձնաժողովն անցնում է նախնական ուսումնասիրության նյութերի հետազոտմանը, որի ընթացքում լսումների մասնակիցները իրավունք ունեն ներկայացնել պարզաբանումներ և տալ հարցեր:

59. Հանձնաժողովի նախագահն իր նախաձեռնությամբ կամ Հանձնաժողովի անդամի միջնորդությամբ կարող է հրավիրել առերևույթ կարգապահական խախտման մեջ մեղադրվող Կոմիտեի ծառայողին, ինչպես նաև այլ անձի: Բացատրությունը կարող է վերցվել նաև տեսակապի միջոցով:

60. Առերևույթ կարգապահական խախտման մեջ մեղադրվող Կոմիտեի ծառայողը և ծառայողական քննությանն առնչվող անձը կարգապահական վարույթի ընթացքում ունեն այս փուլին վերաբերելի՝ սույն կարգի 32-33-րդ, 35-րդ կետերով սահմանված իրավունքներն ու պարտականությունները:

61. Բանավոր միջնորդությունն ամրագրվում է արձանագրության մեջ, իսկ գրավոր միջնորդությունը կցվում է վարույթի նյութերին: Միջնորդությունը պետք է քննության առնվի և լուծվի անհապաղ, բայց ոչ ուշ, քան 2 օրվա ընթացքում:

62. Կարգապահական հանձնաժողովը կարգապահական վարույթի ընթացքում կարող է իրականացնել սույն կարգի 29-րդ կետում սահմանված՝ նախնական ուսումնասիրություն իրականացնող անձին վերապահված լիազորությունները կամ

դրանց կատարումը վերապահել նախնական ուսումնասիրություն իրականացրած անձին:

63. Կարգապահական հանձնաժողովը կարգապահական վարույթի ընթացքում կարող է հանձնարարել նախնական ուսումնասիրություն իրականացնող անձին՝ կատարելու սույն կարգի 29-րդ կետով նախատեսված որևէ գործողություն կամ պարզելու կարգապահական վարույթի համար նշանակություն ունեցող որոշակի հանգամանքներ:

64. Հանձնաժողովը նյութեր չի հետազոտում, եթե առերևույթ կարգապահական խախտման մեջ մեղադրվող Կոմիտեի ծառայողը Հանձնաժողովին հասցեագրված դիմումով կամ բանավոր կերպով ընդունել է իրեն վերագրվող կարգապահական խախտման մեջ իր մեղավորությունը:

65. Լսումներից հետո Հանձնաժողովի նախագահը հայտարարում է դրանց ավարտը և որոշում կայացնելու համար Հանձնաժողովը հեռանում է խորհրդակցական սենյակ:

66. Հանձնաժողովը կարգապահական խախտման հարցը քննելիս խորհրդակցական սենյակում քննարկում և քվեարկությամբ որոշում է հետևյալ հարցերը.

1) կարգապահական խախտման փաստի առկայությունը,

2) կատարված խախտման մեջ Կոմիտեի ծառայողի մեղավորության հարցը

3) պատասխանատվության ենթարկելու կապակցությամբ որոշում կայացնելու համար անհրաժեշտ այլ հարցեր:

67. Սույն կարգի 66-րդ կետով նախատեսված հարցերը քննարկելուց հետո Հանձնաժողովը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) կարգապահական խախտման փաստի բացակայության մասին.

2) կարգապահական խախտման փաստի առկայության և Կոմիտեի ծառայողի մեղավորության մասին.

3) կատարված կարգապահական խախտման մեջ Կոմիտեի ծառայողի մեղավորության բացակայության մասին:

68. Հանձնաժողովը որոշումն ընդունում է խորհրդակցական սենյակում՝ գաղտնի քվեարկությամբ՝ հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Հանձնաժողովի անդամն իրավունք չունի ձեռնպահ մնալ քվեարկությունից: Հանձնաժողովի անդամների հավասար ձայների դեպքում ընդունված է համարվում Կոմիտեի ծառայողի համար առավել բարենպաստ որոշումը:

69. Հանձնաժողովի որոշումները ստորագրում են Հանձնաժողովի նախագահն ու անդամները: Դեմ քվեարկած անդամն իրավունք ունի ներկայացնել հատուկ կարծիք, որը կցվում է որոշմանը:

70. Եթե հարուցված կարգապահական վարույթի տևողությունը, Հանձնաժողովի քվորում չունենալու պատճառով, գերազանցում է Օրենքով սահմանված մեկամսյա

ժամկետը, ապա վարույթը թողնվում է անհետևանք, որի վերաբերյալ կայացվում է որոշում:

71. Սույն կարգի 67-րդ կետով սահմանված որոշումը եռօրյա ժամկետում ուղարկվում է Կոմիտեի նախագահին կամ Կոմիտեի ծառայողին պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին, որի հիման վրա էլ վերջինս Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ նշանակում է կարգապահական տույժ՝ կարգապահական խախտման ծանրությունից ելնելով:

72. << հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը կամ Կոմիտեի ծառայողին պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարգապահական խախտում կատարած Կոմիտեի ծառայողին կարող է ազատել կարգապահական տույժից, եթե նման արարք կատարել է առաջին անգամ, զղջացել է և աջակցել է ծառայողական քննության իրականացմանը:

73. Տույժը նշանակվում է Կոմիտեի ծառայողին պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի համապատասխան որոշմամբ կամ հրամանով: Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար Կոմիտեի ծառայողի նկատմամբ կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ: Մեկ կարգապահական վարույթի շրջանակում մի քանի կարգապահական խախտում հաստատվելու դեպքում Կոմիտեի ծառայողի նկատմամբ կարող է նշանակվել միայն մեկ կարգապահական տույժ:

74. Կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված կարգապահական խախտման ծանրությանը և մեղավորության աստիճանին: Կարգապահական տույժ նշանակելիս հաշվի են առնվում խախտման բնույթը, բովանդակությունը, այն հանգամանքները, որոնց պարագայում կատարվել են խախտումը, խախտման հետևանքները, նախկինում Կոմիտեի ծառայողի նկատմամբ կարգապահական տույժեր կիրառված լինելու և (կամ) խախտումներ կատարած լինելու հանգամանքները:

75. Կոմիտեի ծառայողի նկատմամբ կարգապահական տույժը կարող է կիրառվել միայն ծառայողական քննության արդյունքների հիման վրա:

76. Կարգապահական տույժը նշանակվում է, եթե վեց ամսից ավելի չի անցել կարգապահական խախտումը հայտնաբերելու օրվանից՝ չհաշված հիվանդության կամ արձակուրդում գտնվելու ժամանակահատվածը:

77. Եթե կարգապահական տույժ նշանակվելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա նա համարվում է տույժ չունեցող: Սույն մասի դրույթը չի տարածվում Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-6-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերի վրա:

78. Ծառայողական քննության արդյունքների և կարգապահական տույժի մասին Կոմիտեի ծառայողը տեղեկացվում է կարգապահական տույժի նշանակումից կամ կարգապահական խախտման փաստի բացակայության մասին կամ կատարված կարգապահական խախտման մեջ Կոմիտեի ծառայողի մեղավորության բացակայության մասին որոշումները կայացվելուց հետո՝ հնգօրյա ժամկետում՝ Կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության միջոցով:

79. Կարգապահական տույժի ենթարկված Կոմիտեի ծառայողը չի ազատվում նույն արարքի համար օրենքով սահմանված քաղաքացիական, վարչական կամ քրեական պատասխանատվությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ կարգապահական տույժը կիրառվել է առաքինության ստուգման շրջանակներում կատարված խախտման հիմքով:

80. Ծառայողական քննության նյութերը և համապատասխան որոշումները տրամադրվում են Կոմիտեի անձնակազմի կառավարման վարչությանը դրանց համար հատուկ նախատեսված մատյաններում հաշվառելու և Կոմիտեի արխիվում պահպանելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

«30» 07 2024թ. Երևան № 22-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 57-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝

Հրամայում եմ

1. «ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողական քննություն իրականացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 2023 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 57-Լ հրամանով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

1) 14-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ ենթակետով՝

«6) հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի կողմից այնպիսի վարքագիծ դրսևորելը կամ գույքային դրության առնչությամբ այնպիսի անհամապատասխանությունը, որը հանգեցրել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով անձի բարեվարքության վերաբերյալ բացասական բնույթի խորհրդատվական եզրակացություն տրամադրելուն:»:

2) 15-րդ կետում «-զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա» բառերից հետո լրացնել «–Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից (միայն Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց պարագայում) «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 35.1-ին հոդվածով նախատեսված բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության արդյունքով ներկայացված անձի բարեվարքության վերաբերյալ բացասական բնույթի խորհրդատվական եզրակացությանհիման վրա:» բառերը:

3) 15-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 15.1-ին և 15.2-րդ կետեր՝

«15.1. Ծառայողական քննություն հարուցվում է Օրենքով սահմանված հիմքերն ի հայտ գալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան կարգապահական խախտում կատարելու օրվանից 12 ամիս հետո:

15.2 Ծառայողական քննությունը հարուցվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության արդյունքով բացասական եզրակացությունը տրամադրվելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում, բայց ոչ ուշ, քան խախտումը կատարելուց վեց տարի հետո (բացառությամբ բարեվարքության գույքային դրության առնչությամբ հարուցվող ծառայողական քննությունների): Բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության շրջանակներում գույքային դրության ուսումնասիրության արդյունքով խորհրդատվական բնույթի բացասական եզրակացություն տրամադրվելու դեպքում ծառայողական քննությունը հարուցվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բացասական եզրակացությունը տրամադրվելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում:»:

4) 17-րդ կետում «կամ հրապարակումը» բառերը փոխարինել «, հրապարակումը կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված խորհրդատվական բնույթի բացասական եզրակացությունը» բառերով:

5) 17-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 17.1-ին կետ՝

«17.1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության արդյունքով խորհրդատվական բնույթի բացասական եզրակացություն ներկայացվելու դեպքում կարգապահական հանձնաժողովը պարտադիր հարուցում է ծառայողական քննություն:»:

6) 19-րդ կետում «(միջնորդությունը կամ հրապարակումը)» բառերը փոխարինել «(միջնորդությունը, հրապարակումը կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված խորհրդատվական բնույթի բացասական եզրակացությունը)» բառերով:

7) 24–րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ նոր խմբագրությամբ.

«24. Նախնական ուսումնասիրությունն իրականացվում է հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ավելի, քան ծառայողական քննություն հարուցելուց սկսած 30 օրվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում ՆԱՎ–ի պետի (նախնական ուսումնասիրություն իրականացնող Կոմիտեի ծառայողի անմիջական ղեկավար) պատճառաբանված զեկուցագրի հիման վրա Կոմիտեի նախագահը այդ ժամկետը կարող է երկարացնել 2 անգամ՝ յուրաքանչյուր անգամ ոչ ավելի, քան 30 օրով:»:

8) 24-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 24.1-ին և 24.2-րդ կետեր՝

«24.1. Ծառայողական քննությանը ներգրավված (այդ թվում՝ առերևույթ կարգապահական խախտման մեջ մեղադրվող) Կոմիտեի ծառայողի բացակայության դեպքում նախնական ուսումնասիրության տևողությունը կարող է երկարաձգվել Կոմիտեի ծառայողի բացակայության ժամանակահատվածով:

24.2. Եթե պարզվել է, որ առկա է առերևույթ կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող Կոմիտեի ծառայողի մասնակցությամբ կամ նրա կատարած ենթադրյալ հանցագործության դեպք, ապա նախնական ուսումնասիրությունը կարող է ՆԱՎ–ի պետի պատճառաբանված զեկուցագրի հիման վրա Կոմիտեի նախագահի կողմից կասեցվել մինչև համապատասխան քրեական վարույթի ավարտը:»:

9) 47-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ նոր խմբագրությամբ.

«47. Կարգապահական վարույթ կարող է հարուցվել Հանձնաժողովի կողմից եզրակացությունը ստանալուց հետո՝ 10–օրյա ժամկետում:»:

10) 71-73-րդ կետերում «իրավասություն ունեցող» բառերից հետո լրացնել «մարմնին կամ» բառերը և իրենց համապատասխան հոլովաձևերը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրը:

Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական՝ ***Ս.Խաչատրյան***